

# «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ

ՀՀ, ք. Երևան, Արցախի 75

## ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

### «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» քաղ բաժնետիրական ընկերության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված պայմանագրերի էական պայմանները

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս գլխավոր տնօրեն Գենիկ Կարապետյանի, 03.06.2010 թ.-ին «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հետ կնքել է հետևյալ պայմանագրերը.

1. «Վերականգնվող վարկային գծի բացման պայմանագիր թիվ 100601Վ»: Նշված պայմանագրով Բանկը պարտավորվում է Ընկերության համար բացել վարկային գիծ մինչև 03.06.2011 թ. վերադարձման ժամկետով, 5000000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով, իսկ Ընկերությունը պարտավորվում է վերադարձնել Բանկից ստացված վարկը և վճարել (մուծել) վարկի օգտագործման համար տոկոսները ու այլ վճարները՝ համաձայն պայմանագրի դրույթներով սահմանված չափերի և ժամկետների:
2. «Ավանդի (դեպոզիտի) գրավի պայմանագիր թիվ 100601Գ»:  
Ի ապահովումն նախորդ կետում նշված պայմանագրի, սույն պայմանագրով Ընկերությունը պարտավորվում է հօգուտ Բանկի գրավ դնել դրամական միջոցներ: Պայմանագրով գրավի առարկա է հանդիսանում Բանկի մոտ Ընկերության բացած ավանդային հաշվում առկա 10000000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով դրամական միջոցները:

Գ. Կարապետյան տնօրենների խորհրդի նախագահ,  
գլխավոր տնօրեն

\_\_\_\_\_ (ստորագրություն)

04.06.2010թ.

Կ.Տ.